պատմության որոշ դրվագների վկայագրումը ներկայացվում է ոչ թե առանձին, այլ ժամանակագրական ընդհանուր հոսքի մեջ:

Ընդհանրապես, Դավրիժեցին ձգտել է իրադարձությունները ներկայացնել պատճառահետևանքային կապերով ու ժամանակագրական ճշգրիտ հոսքով, և այդ պատճառով էլ որոշ պատմություններ ընդմիջարկվում են այլ պատմություններով, բովանդակությունը ճյուղավորումներ է տալիս ու միայն գլուխներ անց հանգուցվում, և այլն: Ինքը՝ Դավրիժեցին, այդ կարգի բաժանումների, ընդմիջարկումների ու ճյուղավորումների շուրջ երբեմն պատճառաբանություններ է անում պատմության շրջարկում. «Արդ՝ պատմութիւն ճառիս յաղագս հարիւր թուման մուղադային է, և մինչև ցայս վայր միաշաւիղ էր պատմութիւնս, զոր և անտարակոյս գրեցաք, այլ յայսմ հետէ յերկուս շաւիղս բաժանի և երկատութիւնս պատմութեանս մեզ աշխատանս յաւելու, և վասն ոչ ումեք գիտելոյ զիսկն պատմութեանս՝ հարկ եղև մեզ զերկոսին ևս գրել: Քանզի ոմանք ի պատմողաց, մանաւանդ թէ բազումք, պատմեցին՝ թէ... և այլն» (էջ 195):

Պատմագրքի վերջին մեկ տասնյակից ավելի գլուխներում, կամ պատմագրքի այսպես ասած՝ չմշակված մասում այդ համակարգվածությունը տեղի է տալիս իրադարձությունների ներկայացման անկանոն հոսքին: Ընդհանուր համաբնագրից դուրս են մնում հատկապես վկայաբանությունները: Դրանք, ինչպես արդեն առիթ ունեցել ենք նշելու, բովանդակային գրեթե ոչ մի աղերս չունեն պատմության բուն շարադրանքի հետ: Եթե չլինեին «Պատճառ առնելոյ զգիրս պատմութեանց, յորում և յիշատակարան առնողին» վերնագրով ԾԸ գլուխ-ավարտաբանությունն ու պատմագրքի՝ պատմիչի կենդանության ժամանակ տպագրված լինելու պարագան, կարելի էր մտածել, որ Դավրիժեցին, այնուամենայնիվ, անավարտ է թողել «Գիրք պատմութեանց»-ը: